



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«16» 01 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 001 - 25

Նախաձեռնող՝

«ՄԻՐԱԺ ԶՈՒՐ» ՍՊԸ
Ն.Ջարյան փ./5/8 Արզական 2503

Գործունեությունը՝

Կոտայքի մարզի Արզականի թերմալ ածխաթթվային
հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքից
հանքային ջրի արդյունահանում
Կոտայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 001 - 25

«16» հունվարի 2025թ.

Կոտայքի մարզի Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՄԻՐԱԺ ԶՈՒՐ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Արզական բնակավայր

Ներածական մաս. «ՄԻՐԱԺ ԶՈՒՐ» ՍՊԸ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթով նախատեսում է Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի վարչական տարածքում հանգստի կազմակերպման համար Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից իրականացնել հանքային ջրի արդյունահանում բուժական (ռեկրեացիոն) նպատակով: «ՄԻՐԱԺ ԶՈՒՐ» ՍՊԸ ընկերությունը մարդկանց հանգստի կազմակերպման նպատակով (լողավազաններում օգտագործելու համար) դիմել է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ցանկանալով Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքով հաշվարկված և հաստատված պաշարից ստանալ հանքային ջրի արդյունահանման իրավունք՝ բուժական (ռեկրեացիոն) նպատակով՝ 20 տարի ժամկետով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ: 2/74 հորատանցքը գտնվում է «ՄԻՐԱԺ ԶՈՒՐ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է: Հանքավայրի բացարձակ նիշերը տատանվում են 1485.0-1510.0 մ սահմաններում:

Նկարագրական մաս. Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի վարչական տարածքում, Դալար գետի հովտում: Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 86126,6 մ³/տարի կամ 2,74



վրկ: Թիվ 2/74 հորատանցքի տարածքում առկա է բնակելի տուն (301.2 մ² մակերեսով) իր կից շինություններով (252.4 մ² մակերեսով), այդ թվում՝ լաղավազան (156,7 մ² մակերեսով տարածք): Հողամասի տարածքը կազմում է 0.12338 հա, իսկ շենքի և շինությունների ընդհանուր մակերեսը՝ 553.6 մ²: 2/74 հորատանցքն գտնվում է բնակելի տան և լողավազանի միջնամասում: Ընկերությունը հանգստի կազմակերպման համար լողավազանի տարածքում ունի կառուցված 2 հատ (5.9մx1.4մx1.5մ և 4.9մx3.7մx1.3 մ) կլորացված չափերով լողավազաններ: Նախատեսվում է կառուցել 1.5 մ խորությամբ 5.0 մ x 4.0 մ չափերով նոր լողավազան: Արգականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքի հանքային ջրի արդյունավետ և պատշաճ շահագործման համար «ՄԻՐԱԺ ՋՈՒՐ» ՍՊԸ-ն նախատեսվում է իրականացնել ներքոհիշյալ աշխատանքները՝

1.Ջրհավաք հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորել համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր՝ Կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու մասին» N 1267-Ն որոշման պահանջներին համապատասխան:

2.Իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ:

3.Ջրհավաք հորատանցքից ջրառն իրականացնել բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար:

4.Հորատանցքի վրա կիրառել փականային ռեժիմ, անհրաժեշտության դեպքում նախատեսել հանքային ջրի որոշակի թողք, բացառելով ջրահեռացվող ջրի օգտագործման հնարավորությունը:

Հորատանցքի տեղագրական կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգով		II. ARM WGS-84 կոորդինատների համակարգով		Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
2/74	X = 4480317	Y = 8466452	X = 4480310	Y = 8466350	1495.0

Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջի սահմաններում, որն իրենից ներկայացնում է բյուրեղային բարձրացում՝ խիստ մասնատված էրոզիոն-կառուցվածքային ռելիեֆով: Այդ առանձնահատկություններից կախված առանձնացվում են ռելիեֆի երկու տիպեր՝

- երիտասարդ կտրուկ մասնատված էրոզիոն ռելիեֆ՝ մշակված մինչքեմբրի, ստորին պալեոզոյի, կավճի և էոցենի բյուրեղային ապարներում,



➤ համեմատաբար թույլ մասնատված թեք սարավանդի ռելիեֆ՝ կազմված միոպլիոցենի լավաներով:

Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով: Թեք ու անտառազուրկ լանջերում շատ են հեղեղատներն ու փոքր հովիտները: Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան անտառային ծածկույթներ, արդյունաբերական, բնակելի և տնտեսական շինություններ:

Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը երկրաբանական տեսակետից տեղադրված է Արզականի բյուրեղային զանգվածի սահմաններում, որի երկրաբանական կառուցվածքը կազմված է մինչքեմբրիի, պալեոզոյի, մեզոզոյի, կայնազոյի դարաշրջանի ապարներով և չորրորդական նստվածքներով: Շրջանի ընդհանուր հիդրոերկրաբանական պայմանների ձևավորման գործում գլխավոր դեր են կատարում կլիմայական, երկրաձևաբանական (գեոմորֆոլոգիական) պայմանները և երկրաբանական կառուցվածքը: Շրջանի ստորերկրյա ջրերը կապված են վերը նկարագրված լեռնային ապարների գրեթե բոլոր շերտագրական (ստրատիգրաֆիական) ստվարաշերտերի հետ:

Նկարագրվող շրջանում համալիրի հրաբխածին ապարներն ունեն լայն տարածում և զարգացած են հիմնականում Դալար գետի վերին հոսանքում և ջրբաժան մասերում:

Աղբյուրների ծախսերը տատանվում են 0.01-0.3 լ/վրկ սահմաններում և չեն գերազանցում 1.0 լ/վրկ: Բացառություն են կազմում որոշ աղբյուրներ՝ կապված միոպլիոցենի հասակի անդեզիտների հետ, որտեղ ծախսը հասնում է մինչև 2.0-5.0 լ/վրկ: Ջրերի հանքայնացումը կազմում է 0.2-0.3 գ/լ, ջերմաստիճանը՝ 9.0-10.00 C: Ջրերն ըստ քիմիական կազմի հիդրոկարբոնատ-կալցիումային են կամ նատրիումային:

Շրջանի կլիման բնութագրվում է մեղմ մայրցամաքային կլիմայով՝ խիստ ամառ և ձմեռ: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C-ից մինչև 2.5°C

Հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Արզականի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում Արզական գյուղի տարածքում, բնակելի շենքերի հարևանությամբ, հանքավայրի տեղամասում չկան անտառային ծածկույթներ, բացակայում են սողանքային երևույթները և այլն: Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Արզականի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքերի շահագործման բազմամյա փորձը ցույց է տվել, որ արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնածին ճնշումներ հանքավայրի շրջակայքի մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա չեն դրսևորվել, քանի որ, հանքային ջրի արդյունահանման ընթացքում փոշու և վնասակար նյութերի արտանետումներ չի կատարվել, իսկ կենցաղային աղբը տեղափոխվել է մոտակա աղբավայրի կետեր: Արզականի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական, բնակելի և տնտեսական շինություններ: Ընկերությունն օգտվելու է



գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, իսկ հանքավայրի շահագործման համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում: Հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կահավորվելու է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ, ինչի նպատակն է հանքային ջրերի պահպանությունը և աղտոտման կանխարգելումը: Ջրհավաք հորատանցքի շուրջը ստեղծվելու է սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտին, որը ցանկապատվելու է տուֆ քարով և ապահովված է լինելու պահպանությունով: Ընկերությունը ցանկապատվելու է տուֆ քարով և ապահովված է լինելու պահպանությունը հանդիսացող հանքային ջրի գործունեությունը իրականացնելու է իր սեփականությունը հանդիսացող տարացքում: Կապտաժային շինության շուրջը բացառվելու է ցանկացած տեսակի գործունեություն, որը կարող է որևէ կերպ ազդել հանքային ջրի վրա: Ջրառի արդյունքում մթնոլորտային օդը աղտոտող արտանետումներ չեն լինելու: Հողի և բուսածածկի խախտում չի նախատեսվում, իսկ իրականացվելիք արդյունահանման աշխատանքների նպատակն է բնական պաշար հանդիսացող հանքային ջրի արդյունավետ և նպատակային օգտագործումը: Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրա գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտու առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:

Արզականի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքի շահագործումը ընկերությունը պետք է իրականացնի փակ ռեժիմով: Հորատանցքի գլխամասը սահմանված կարգով կկահավորվի համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ: Սույն աշխատանքները կիրականացվեն համաձայն Կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշմանը, որը կիրառվում է բնօգտագործման վճար վճարող ջրօգտագործողների կողմից ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման նպատակով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի, գազաչափերի տեղադրման և կնքման, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգերը և ժամկետները սահմանելու ժամանակ:

Նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, կլիմայի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը: Շրջակա միջավայրի պահպանության համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ջրհավաք հորատանցքերի շահագործման աշխատանքները իրականացնել՝ հաշվի առնելով ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտների ՀՀ օրենսդրության պահանջները, որոնք ներառում են հետևյալ հիմնական միջոցառումները.
- բնական պայմանների խախտման բացասական երևույթների վերացում,
- բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և շրջակա միջավայրի պահպանման համար առանցքային միջոցառումների ձեռնարկումը,

Արզականի ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքների ընթացքում որևիցե տեխնաժիմ ճնշումներ հանքավայրի շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների վրա չեն դրսևորվելու, հաշվի առնելով հանքային ջրերի հանքավայրերի, այդ թվում շահագործման աշխատանքների բնույթը և երկարամյա փորձը, որը գալիս է հավաստելու, որ դրանց պաշարների արդյունաբերական յուրացումն և բացասական ազդեցություն չի թողնում շրջակա միջավայրի վրա: Գնահատման հաշվետվությամբ



ներկայացվել է շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիր (բնապահպանական կառավարման պլան):

Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում: Ածխաթթվային հանքային ջրերի հանքավայրի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ պետք է ներառի հանքավայրի վիճակի նկարագիրը՝ հանքավայրի պաշտպանումն աղտոտումից, սպառումից: Օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված է առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտի, ինչը անհրաժեշտ է հանքային ջրի ֆիզիկական և քիմիական հատկությունների պահպանման, հորատանցքի ելքը հնարավոր աղտոտումից պահպանելու համար:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է բոլոր այն հորատանցքերը (թիվ 1/74, 2/74 և 14/76), որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները: Նկատի ունենալով ջրհավաք թիվ 2/74 հորատանցքի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը, այն գտնվում է բարենպաստ հիդրոերկրաբանական պայմաններում, որտեղ բացառվում է ստորերկրյա ջրերի աղտոտումը: Ջրհավաք թիվ 2/74 հորատանցքը գտնվում է սեփականաշնորված 0.12338 հա տարածքում, որն ամբողջությամբ պարսպատված է և ապահովում է հորատանցքի առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտին: Թիվ 2/74 հորատանցքը գտնվում է Դալար գետից 8.0 մ հեռավորության վրա և պաշտպանված է վարարումներից:

Առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտու տարածքը անմիջապես հորատանցքի մոտ պլանավորված է այնպես, որպեսզի հնարավոր լինի մակերևութային աղտոտված ջրերը հեռացնել հորատանցքի սահմաններից դուրս: Այստեղ սանիտարական պահպանության գոտու տարածքում արգելվում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքներ, որոնք չունեն անմիջական կապ հորատանցքի շահագործման, վեռակառուցման/վերանորոգման և սպասարկման հետ, ինչպես նաև գործողություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հանքավայրի հանքային ջրերի և նրանց սանիտարական վիճակի վրա: Ընդերքօգտագործողը/ջրօգտագործողը սանիտարական պահպանության գոտու սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք: Կողմնակի մարդկանց մուտքը, որոնք կապ չունեն հանքավայրի հորատանցքի շահագործման և պահպանության հետ խստիվ արգելվում է: Արգելվում է յուրաքանչյուր գործունեություն այլ անձի կողմից: Այն կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի/ջրօգտագործողի համաձայնությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքի լողավազաններն ամբողջությամբ կահավորված են և գտնվում են առանձին կառուցապատված տարածքում, որն առանձնացված է հորատանցքի տարածքից, որտեղ հանգստացողները մուտք գործել չեն կարող: «ՄԻՐԱԺ ՋՈՒՐ» ՍՊԸ կողմից ՀՀ Կոտայքի մարզի Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման ժամանակ ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանում և հետևաբար դրա իրականացման համար ֆինանսական երաշխիք չի նախատեսվում:

Նախատեսվող գործունեության ընթացքում կազմվելու է հիդրոերկրաբանական մշտադիտարկումների (մոնիտորինգի) իրականացման պլան:

Բնապահպանական մշտադիտարկումների համար նախատեսվել է 600000 ՀՀ դրամ:



Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և լուսմները կատարվել են Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրում: Արզական բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, Չարենցավան համայնքից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են հանքային ջրի արդյունահանման և շինարարական աշխատանքների իրականացման հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքային ջրի արդյունահանումն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ Կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի N 1484-Ն որոշման պահանջներով:
2. Անհրաժեշտ է առաջնորդվել Ընդերքի մասին օրենսգրքի 67-րդ հոդվածի և ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. նոյեմբերի 29-ի N 803 հրամանի պահանջներով՝ սանիտարական պահպանման առաջին գոտու սահմաններում հորատանցքն աղտոտումից զերծ պահելու նպատակով:
3. Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշման պահանջներով:
4. Հանքային ջրի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական նորմերը:
5. Ապահովվել հանքային ջրի արդյունավետ շահագործումը, խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումներին, և բնապահպանական պահանջների կատարմանը:



ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ՄԻՐԱԺ ԶՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արզականի թերմալ ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Հովակիմ Ֆրունզիկյան